ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31-1

ք. Երևան «28» «03» 2018թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Զթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵրՄիք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ա.Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հակահամաճարակային /դեռատիզացիոն/ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***21,480,605.0 (քսանմեկ միլիոն չորս հարյուր ութսուն հազար վեց հարյուր հինգ) ՀՀ դրամ:***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին, որը սահմանվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Պայմանագրի Տեխնիկական բնութագիր - Գնման ժամանակացույցում (Հավելված 1) նշված ստորաբաժանում՝ իր մասով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթոյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Երմիք» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 83-22
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Սարաջով մ/ճ
Հ/Հ 163488575180
ՀՎՀՀ 01508718

Ա.Սահակյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«28» «02» 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը*
1	90921300/341	Աշխատակազմի քարտուղարության Վարչական շենքերի դեռատիզացիոն ծառայություն	Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերում ք.Երևան, Արգիշտիի 1 հասցեի շենք՝ 3148 քմ, Փ.Բուզանդի 1/3 հասցեի շենք՝ 1600քմ, ամիսը 3 անգամ իրականացնել պայքար կրծողների դեմ մեխանիկական եղանակով /թակարդ, վերշա/ և քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ /լանիրատ, բրոմոդիալոն և այլ թունաքիմիկատներ/, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Դեռատիզացիոն աշխատանքները կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով:	ծառայություն	564062	1	Արգիշտիի 1 և Փ.Բուզանդի 1/3	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
4	9067000/302	Արաբկիր վ/շ դեռատիզացիոն ծառայություն	Գնման առարկա է հանդիսանում Արաբկիրի վարչական շենքի, վարչական շրջանի ենթակայության թվով 13 մանկապարտեզների, թվով 2 գրադարանների և սեփական տնատիրությունների դեռատիզացիոն ծառայությունները: 1. Պայքար կրծողների դեմ, համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010թ. Թիվ 13-Ն հրամանով հաստատված «Կրծողների դեմ պայքարի սանիտարական կանոնների և նորմերի: Կրծողազերծման աշխատանքներն իրականացնելուց առաջ սպասարկող կազմակերպությունը կատարում է տարածքի հետազոտություն, որի արդյունքում սանիտարատեխնիկական վիճակի բարելավման նպատակով պետք է տրվի առաջարկներ՝ կանխարգելիչ և ոչնչացման միջոցառումների իրականացման համար: Կազմակերպությունների հետազոտությունը նպատակաուղղվում է՝ • կրծողների հայտնաբերմանը, • դրանց բնակության պայմանների ուսումնասիրմանը, • խտության, տեղակայման առանձնահատկությունների, սերնդատվության բնութագրմանը, • դրանց դեմ պայքարի մարտավարության և ռազմավարության մշակմանը, • կրծողների միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը: Կրծողների առկայության վերաբերյալ հետազոտությունները պետք է կատարվեն օբյեկտի ողջ տարածքում՝ տարին երկու անգամ:	քմ	533000	41000	Արաբկիր վարչական շրջան	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

			Կրծողներով վարակված հասցեներում իրականացվում է կրծողների պարբերաբար՝ ըստ ժամանակացույցի (ամրագրված պայմանագրում) և ցուցումով ոչնչացում, երկարատև ազդող նյութերով, որոնք կանխում են դրանց տեղաշաժը (միգրացիան): Կրծողների թվաքանակի նվազեցման նպատակով իրականացվում են կրծողների ոչնչացման աշխատանքներ ողջ տարածքում, ինչպես նաև օժանդակ հրապարակներում: 2. Պայքարը կազմակերպել մեխանիկական /թակարդներ, սոսնձե բռնիչներ/ և քիմիական /ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն/ մեթոդներով: Շենքերում, որտեղ կա չփաթեթավորված սննդամթերք, պայքարի թունավոր միջոցներն պետք է օգտագործվի ծածկելու մեթոդով (կպչող կամ մեխանիկական եղանակով): Թունավորված հատիկավոր գրավչանյութերը չպետք է տեղադրվեն սննդամթերքին մոտ: Մանկական կազմակերպություններում կրծողների դեմ պայքարի քիմիական և ֆիզիկական եղանակների կիրառման ժամանակ պետք է պահպանվի անվտանգությունը՝ բացառելով երեխաների շփումն օգտագործվող նյութերի հետ: Վերոհիշյալ կազմակերպություններում միջոցառումներ իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել անվտանգության հետևյալ կանոնները՝ • չօգտագործել սուր ազդող թունավոր նյութեր ու փոշիներ, • գրավչանյութերը տեղադրել երեխաների համար անմատչելի հատուկ տարաներում, որտեղ կարող են մուտք գործել միայն կրծողները, • բացառել երեխաների շփումը կրծողների հետ, • բացառել կրծողների շփումը սննդամթերքի, դեղերի և այլ կենցաղային առարկաների հետ, • թունավոր գրավչանյութերը տեղադրել միայն ուղղահայաց մակերես ունեցող հատուկ տարաներում: Գրավչանյութերի համարակալված տարաները ստորագրությամբ հանձնել պատվիրատուի կողմից լիազորված անձին: Կրծողների դիակները հավաքել և ոչնչացել: Կրծողների վերացման միջոցառումները համարվում են անբավարար, եթե կրծողներից ազատված տարածք հայտարարված շինությունում հայտնաբերվում են դրանց կենսագործունեության թարմ նշաններ: 3. Այլ պայմաններ-դեռատիզացիոն աշխատանքները կատարվում են սպասարկող կազմակերպության բանվորական ուժերով և միջոցներով: 4. Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանյութերի պատրաստման ու փորձարկման լաբորատորիաներով:					
5	90921300/316	Էրեբունի վ/շ դեռատիզացիոն ծառայություն	Ծառայության նկարագիրը - Պայքար կրծողների դեմ, համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010 թ. Թիվ13-Ն հրամանով հաստատված <<Կրծողների դեմ պայքարի սանիտարակ կանոնների և նորմերի >> : Պայքարը կազմակերպել մեխանիկական (թակարդներ, սոսնձե բռնիչներ) և քիմիական (ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն) մեթոդներով: Այլ պայմաններ – դեռատիզացիոն աշխատանքները կատարվում են սպասարկող կազմակերպության բանվորական ուժերով և միջոցներով: Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանյութերի պատրաստման ու փորձարկման լաբորատորիայով:	քմ	2000520	700000	ք. Երևան Էրեբունի վարչական շրջան	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

			Էրեբունի վարչական շրջանի մասնավոր տնատիրությունների , ջրանցքների հարակից տարածքների մշակման հաճախականությունը՝ ամիսը 1 անգամ:					
6	90921300/315	Էրեբունի վ/շ դեռատիզացիոն ծառայություն	Ծառայության նկարագիրը - Պայքար կրծողների դեմ, համաձայն << Առողջապահության նախարարության 16.07.2010 թ. Թիվ13-ն հրամանով հաստատված <<Կրծողների դեմ պայքարի սանիտարակ կանոնների և նորմերի >> : Պայքարը կազմակերպել մեխանիկական (թակարդներ, սոսնձե բռնիչներ) և քիմիական (<<-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն) մեթոդներով: Այլ պայմաններ - դեռատիզացիոն աշխատանքները կատարվում են սպասարկող կազմակերպության բանվորական ուժերով և միջոցներով: Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանյութերի պատրաստման ու փորձարկման լաբորատորիայով: Էրեբունի վարչական շրջանի վարչական շենքի և հարակից տարածքների մշակման հաճախականությունը՝ ամիսը 2 անգամ:	քմ	151800	2530	Ս.Դավիթ 87	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
7	90921300/332	Կենտրոն վ/շ դեռատիզացիոն ծառայություն	1. Ծառայության նկարագիրը – Պայքար կրծողների դեմ, համաձայն << Առողջապահության նախարարության 16.07.2010թ. Թիվ 13-ն հրամանով հաստատված << Կրծողների դեմ պայքարի սանիտերական կանոնների և նորմերի>>: 2. Պայքարը կազմակերպել մեխանիկական / թակարդներ , սոսնձե բռնիչներ / և քիմիական / <<-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն / մեթոդներով: 3. Այլ պայմաններ – դերատիզացիոն աշխատանքները կատարվում են սպասարկող կազմակերպության բանվորական ուժերով և միջեցներով: 4. Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահոված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանութերի պատրաստման ու փորձակման լաբորատորիայով:	քմ.	13915123	2898984	ՏԵՐՅԱՆ 44	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

Հ/Հ	Հասցե	Մշակվող մակերեսը / քմ/
1	Կենտրոն վարչական շրջանի վարչական շենք	7 200
2	Թիվ 1 տեղամասի տներ	122 988
3	Թիվ 2 տեղամասի տներ	109 968
4	Թիվ 3 տեղամասի տներ	137 160
5	Թիվ 4 տեղամասի տներ	174 480
6	Թիվ 5 տեղամասի տներ	123 696
7	Թիվ 6 տեղամասի տներ	70 608
8	Թիվ 7 տեղամասի տներ	102 168
9	Թիվ 8 տեղամասի տներ	50 172
10	Թիվ 9 տեղամասի տներ	175 920
11	Թիվ 10 տեղամասի տներ	154 464
12	Թիվ 11 տեղամասի տներ	215 004
13	Թիվ 12 տեղամասի տներ	160 680
14	Թիվ 13 տեղամասի տներ	110 976
15	Թիվ 14 տեղամասի տներ	206 532

			16 Թիվ 15 տեղամասի տներ 96 528 17 Թիվ 16 տեղամասի տներ 120 528 18 Թիվ 17 տեղամասի տներ 63 096 19 Թիվ 18 տեղամասի տներ 162 240 20 Թիվ 20 տեղամասի տներ 117 180 21 Թիվ 21 տեղամասի տներ 100 548 22 Թիվ 22 տեղամասի տներ 100 308 23 Թիվ 23 տեղամասի տներ 19 308 24 Թիվ 25 տեղամասի տներ 70 152 25 Թիվ 26 տեղամասի տներ 115 848 Վարչական շրջանի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքեր 1 Քաջազնունի 4 շ 648 2 Իսահակյան 24 շ 216 3 Հերացի 18 շ 648 4 Հերացի 18ա 648 5 Հերացի 20 շ 648 6 Հերացի 22 շ 648 7 Իսահակյան 22 շ 216 8 Խրոենացի 47/7 864 9 Իսահակյան 8 432 10 Այգեստան 11/89 432 11 Այգեստան 9/41 432 12 Մոսկովյան 23 216 13 Թումայան 16 216 14 Զաքյան 5 1 080 15 Մաշտոցի 34 432 16 Թումանյան 2,4 648 17 Խանջյան 37 432 18 Կողբացի 41 432 19 Լալայանց 37 1080 20 Խանջյան 39,41 864					
8	90921300/334	Նոր Նորք վ/շ դեռատիզացիոն ծառայություն	Պայքար կրծողների դեմ, համաձայն ՀՀ առողջապահության նախարարության 16.07. 2010թ. Թիվ 13-Ն հրամանով հաստատված <<Կրծողների դեմ պայքարի սանիտարական կանոնների և նորմերի>>: Պայքարը կազմակերպել մեխանիկական /թակարդներ,սոսնձե բռնիչներ/ և քիմիական/ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝բրոմոդիալոն,բրոդիֆակում և այլն/մեթոդներով: Դեռատիզացիոն աշխատանքները կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով:Սպասարկող կազմակերպությունը պետք է ապահովված լինի թունաքիմիկատների պահպանման պահեստներով և գրավչանյութերի պատրաստման ու փորձարկման լաբորատորիայով:	քառ.մ	105000	4200	ք. Երևան Գայի 19	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018
9	90921300/343	Նորք-Մարաշ վ/շ Դեռատիզացիոն ծառ.	1. Պայքար կրծողների դեմ, համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության 16.07.2010թ. Թիվ 13-Ն հրամանով հաստատված «Կրծողների դեմ պայքարի սանիտարական կանոնների և նորմերին: Կրծողազերծման աշխատանքներն իրականացնելուց առաջ սպասարկող	քմ	597600	199200	Ա.Արմենակյան 272	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

			կազմակերպությունը կատարում է տարածքի հետազոտություն, որի արդյունքում սանիտարատեխնիկական վիճակի բարելավման նպատակով պետք է տրվի առաջադրանքներ՝ կանխարգելիչ և ոչնչացման միջոցառումների իրականացման համար: Կազմակերպությունների հետազոտությունը նպատակաուղղվում է՝ • կրծողների հայտնաբերմանը, • դրանց բնակության պայմանների ուսումնասիրմանը, • խտության, տեղակայման առանձնահատկությունների, սերնդատվության բնութագրմանը, • դրանց դեմ պայքարի մարտավարության և ռազմավարության մշակմանը, • կրծողների միջոցով փոխանցվող վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը: Կրծողների առկայության վերաբերյալ հետազոտությունները պետք է կատարվեն օբյեկտի ողջ տարածքում՝ տարին երկու անգամ: Կրծողներով վարակված հասցեներում իրականացվում է կրծողների պարբերաբար՝ ըստ ժամանակացույցի (ամրագրված պայմանագրում) և ցուցումով ոչնչացում, երկարատև ազդող նյութերով, որոնք կանխում են դրանց տեղաշաժը (միգրացիան): Կրծողների թվաքանակի նվազեցման նպատակով իրականացվում են կրծողների ոչնչացման աշխատանքներ ողջ տարածքում, ինչպես նաև օժանդակ հրապարակներում: 2. Պայքարը կազմակերպել մեխանիկական /թակարդներ, սոսնձե բռնիչներ/ և քիմիական /ՀՀ-ում թույլատրված թունաքիմիկատներով՝ բրոմոդիալոն, բրոդիֆակում և այլն/ մեթոդներով: Շենքերում, որտեղ կա չփաթեթավորված սննդամթերք, պայքարի թունավոր միջոցներն պետք է օգտագործվի ծածկելու մեթոդով (կպչող կամ մեխանիկական եղանակով): Թունավորված հատիկավոր գրավչանյութերը չպետք է տեղադրվեն սննդամթերքին մոտ: Մանկական կազմակերպություններում կրծողների դեմ պայքարի քիմիական և ֆիզիկական եղանակների կիրառման ժամանակ պետք է պահպանվի անվտանգությունը՝ բացառելով երեխաների շփումն օգտագործվող նյութերի հետ: Վերոհիշյալ կազմակերպություններում միջոցառումներ իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել անվտանգության հետևյալ կանոնները՝ • չօգտագործել սուր ազդող թունավոր նյութեր ու փոշիներ, • գրավչանյութերը տեղադրել երեխաների համար անմատչելի հատուկ տարաներում, որտեղ կարող են մուտք գործել միայն կրծողները, • բացառել երեխաների շփումը կրծողների հետ, • բացառել կրծողների շփումը սննդամթերքի, դեղերի և այլ կենցաղային առարկաների հետ, • թունավոր գրավչանյութերը տեղադրել միայն ուղղահայաց մակերես ունեցող հատուկ տարաներում: Գրավչանյութերի համարակալված տարաները ստորագրությամբ հանձնել պատվիրատուի կողմից լիազորված անձին: Կրծողների դիակները հավաքել և ոչնչացել: Կրծողների վերացման միջոցառումները համարվում են անբավարար, եթե կրծողներից ազատված տարածք հայտարարված շինությունում հայտնաբերվում են դրանց կենսագործունեության թարմ նշաններ:					
10	90921200/308	Նորք-Մարաշ ψ/2 Դիսենկցիոն ծառ.	Պայքար օձերի և կարիճների դեմ մեխանիկական եղանակով քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ օրենսդրությամբ: Ծառայությունը կատարել	քմ	113500	875	Ա.Արմենական 272	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

			սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով: Մշակման հաճախականությունը՝ ըստ պահանջվող նորմերի: Տարածքների ուսումնասիրության հաճախականությունը՝ ամիսը 2 անգամ: Մշակվող ընդհանուր մակերեսը՝ 87,5 քմ: Ծառայության մատուցման ժամկետը՝ մայիս-սեպտեմբեր ամիսներ					
12	90921300/338	Շենգավիթ վարչական շենքի ախտահանման և միջատազերծման (դեռատիզացիոն, դեզինսեկցիոն) ծառայություն	-Տարածքի մակերեսը մեկ մշակման դեպքում՝ 10000 քմ -Մշակման հաճախականությունը՝ Միանգամյա, - Ծառայության նկարագրությունը՝ Պայքար կրծողների դեմ մեխանիկական եղանակով /թակարդ, վերշա/ և քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ /լանիրատ, բրոմոդիալոն/, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: -Այլ պայմաններ՝ Դեռատիզացիոն աշխատանքները կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով:	քմ	3500000	144000	Շենգավիթ վարչական շրջան	4-րդ եռամսյակ՝ մինչև 25.12.2018

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԵրՄիք» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 83-22
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Սարաջով մ/հ
Հ/Հ 163488575180
ՀՎՀՀ 01508718

Ա.Սահակյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«24» «02» 2018 թ. կնքված
ԵՔ-ՊՄՇՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

Ապրանքի																
Հ/Հ	անվանումը	հաշվեհամարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	Աշխատակազմի քարտուղարություն Վարչական շենքերի դեռատիզացիոն ծառայություն	900012410016	----------	----------	141015.5	282031	282031	282031	423046.5	423046.5	423046.5	564062	564062	564062	**564062**	
4	Արաբկիր վ/շ դեռատիզացիոն ծառայություն	900032313398	----------	----------	133250	266500	266500	266500	399750	399750	399750	533000	533000	533000	**533000**	
5	Էրեբունի վ/շ դեռատիզացիոն ծառայություն	900022600408	----------	----------	500130	1000260	1000260	1000260	1500390	1500390	1500390	2000520	2000520	2000520	**2000520**	
6	Էրեբունի վ/շ դեռատիզացիոն ծառայություն	900022600309	----------	----------	37950	75900	75900	75900	113850	113850	113850	151800	151800	151800	**151800**	
7	Կենտրոն վ/շ դեռատիզացիոն ծառայություն	900012213667	----------	----------	3478780.75	6957561.5	6957561.5	6957561.5	10436342.25	10436342.25	10436342.25	13915123	13915123	13915123	**13915123**	
8	Նոր Նորք վ/շ դեռատիզացիոն ծառայություն	900032098379	----------	----------	26250	52500	52500	52500	78750	78750	78750	105000	105000	105000	**105000**	

9	Նորք-Մարաշ վ/շ Դեռատիզացիոն ծառ.	900012416104	----------	----------	149400	298800	298800	298800	448200	448200	448200	597600	597600	597600	***597600***
10	Նորք-Մարաշ վ/շ Դիսենկցիոն ծառ.	900012416104	----------	----------	28375	56750	56750	56750	85125	85125	85125	113500	113500	113500	***113500***
12	Շենգավիթ վարչական շենքի ախտահանման և միջատազերծման (դեռատիզացիոն, դեզինսեկցիոն) ծառայություն	900022750690	----------	----------	840000	1680000	1680000	1680000	2520000	2520000	2520000	3500000	3500000	3500000	***3500000***

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան_____
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«ԵրՄիք» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 83-22
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Սարաջով մ/ճ
Հ/Հ 163488575180
ՀՎՀՀ 01508718

Ա.Սահակյան_____
(ստորագրություն)

Հավելված 3
«28» «02» 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» «02» 2018թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	*չափման միավորը*	*քանակը (փաստացի)*

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «28» «02» 2018թ.

«ԵրՄիք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն՝ Ա.Սահակյանի (անձնագիր՝ AF0628725, տրված 22.04.2003թ., 011-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԵրՄիք» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 83-22
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Սարաջով մ/ճ
Հ/Հ 163488575180
ՀՎՀՀ 01508718

Տնօրեն՝ Ա.Սահակյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N *(պայմանագրի կատարման ապահովում)*	
2. Ներկայացման ամսաթիվը՝	*«___» «___» 20___թ.*
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝	***«ԵրՄիք» ՍՊԸ***
4. Վճարողի բանկը՝	***«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Սարաջով մ/ճ***
5. Վճարողի հաշվի համարը՝	***163488575180***
6. Վճարողի ՀՎՀՀ՝	***01508718***
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝	***Երևանի քաղաքապետարան***
9. Շահառուի ՀՎՀՀ՝	***02593108***
10. Շահառուի բանկը՝	***Կենտրոնական գանձապետարան***
11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/	***900015211429***
12. Գումարը թվերով և բառերով՝	***2,148,060.5 (երկու միլիոն մեկ հարյուր քառասունութ հազար վաթսուն դրամ հիսուն լումա)***
13. Արժույթը (բառերով և կոդով)՝	***ՀՀ դրամ (AMD)***
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝	***Պայմանագրի կատարման ապահովում***
15.Պայմանագրի ծածկագիրը՝	***ԵՔ-ԲՄԾՁԲ-18/31-1***
16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	17. կից՝— էջ
19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.